

ԹԻՄ ՔԵՅՆ

Թիմ Քեյնն իր ողջ կյանքում թե՛ որպես միսիոներ, քաղաքացիական իրավունքի հարցերով փաստաբան, ուսուցիչ և թե՛ ընտրովի պաշտոնյա մշտապես օգնել է մարդկանց: Ամերիկայի պատմության մեջ նա մեկն է այն 30 մարդկանցից, ովքեր եղել են քաղաքապետ, նահանգապետ և սենատոր:

Թիմը 2012թ. ընտրվեց սենատոր՝ լինելով լավատես ու կարող ակտիվիստ, ով ուներ տարբեր կուսակցական, ռասայական ու աշխարհագրական պատկանելության տեր մարդկանց համատեղելու ձիրք: Սենատում նա ներգրավված է զինված ուժերի, բյուջեի, արտաքին հարաբերությունների և ծերացման հարցերով հանձնաժողովներում, նաև ղեկավար դիրք է զբաղեցնում զինված ուժերի պատրաստականության և արտաքին հարաբերությունների պետքարտուղարության, ԱՄՆ ՄԶԳ կառավարման, միջազգային գործողությունների ու երկկողմ միջազգային զարգացման հարցերով ենթահանձնաժողովներում:

Զինված ուժերի հանձնաժողովում Թիմի աշխատանքն ուղղված է օրեցօր փոխվող աշխարհի համար պաշտպանական ռազմավարության ձևավորմանը, ինչի շրջանակում նա նաև հետամուտ է անձամբ իր համար առաջնահերթ համարվող մի հարցի, այն է՝ վետերանների շրջանում գործազրկության կրճատումը, մասնավորապես Իրաքի և Աֆղանստանի վետերանների շրջանում: Սենատի առաջին օրենսդրական նախաձեռնությունն այս հարցի առնչությամբ Զինձառայողների կարողությունների մասին 2013թ. օրենքն էր, որով սահմանվում էին նոր ստանդարտներ ակտիվ ծառայության մեջ գտնվող զինձառայողների համար իրենց ռազ-

մական հմտություններին համարժեք քաղաքացիական որակավորումներ ստանալու համար, ինչը կօգներ նրանց ակտիվ ծառայությունից հետո աշխատուժը համալրելու հարցում: Որպես հանձնաժողովական նա նաև աշխատել է ապահովել Վիրջինիայի առաջնահերթությունները վերջին երեք պաշտպանական օրինագծերի հետ կապված, որոնք վերաբերում էին Նորֆոլքում գտնվող «Ջորջ Վաշինգտոն» միջուկային ավիակիր նավի վերալիցքավորման ու վերանորոգման ֆինանսավորմանը 2015թ.-ին և ԱՄՆ նավատորմի 11 ավիակիրների պահպանության և Հենվիթոն Ռոուդս նավահանգստային գոտում հազարավոր աշխատատեղերի ֆինանսավորմանը 2016թ.-ին:

Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում Թիմի աշխատանքը միտված էր ամերիկյան դիվանագիտության առաջատար դիրքերի ամրապնդմանը՝ հիմնականում Միջին Արևելքում ու Լատինական Ամերիկայում: Նա այն առաջատար ձայներից մեկն է, որ հանդես է գալիս արտաքին քաղաքականության հարցում կոնգրեսի դերակատարումը մեծացնելու և պատերազմի, խաղաղության և դիվանագիտության հարցերում նախագահի ու կոնգրեսի միջև խորհրդակցություններն ավելի լավ հիմքերի վրա տեղափոխելու դիրքերից: Թիմը ներկայացրել է երկու կուսակցությունների աջակցությունը վայելող օրինագիծ, որով վերանայվում է 1973թ. Պատերազմական լիազորությունների մասին բանաձևը: Նա նաև հետևողականություն է հանդես բերել, որ կոնգրեսը քվեարկի ԻԼԻՊ-ի դեմ ամերիկյան ռազմական գործողությունների օգտին: Թիմը համահեղինակել է Միջուկային համաձայնագրի վերանայման ակտը, որով սահմանվել իրանական միջուկային ծրագրի արգելափակ-

մանն ուղղված դիվանագիտական ջանքերը կոնգրեսի կողմից գնահատելու գործընթացը: Նա սակավաթիվ սենատորներից մեկն է, ով տիրապետում է իսպաներենին և ԱՄՆ-Իսպանիա խորհրդի պատվավոր նախագահն է:

Բյուջեի հարցերով հանձնաժողովում Թիմը գործի դրեց Վիրջինիայում տեղական ու նահանգային մակարդակներում բյուջեի հետ կապված դժվարին որոշումներ ընդունելու իր փորձառությունը՝ օգնելու կոնգրեսին ընդունել բյուջեի երկամյա ծրագիր, որով մեղմվում էր բյուջեի սեկվեստորի անհամամասնական ազդեցությունը: Սեկվեստորի կիրառման խիստ քննադատ ու երկամյա բյուջեի կազմման կողմնակից լինելով՝ Թիմը աջակցում էր բյուջեի 2015թ. ներկուսակցական փաստաթղթին, որը շարունակում էր սեկվեստորի կրճատումների մասշտաբների մեղմումը և ապահովում էր որոշակիություն ևս երկու տարվա կտրվածքով:

Թիմը հիմնադրել և համանախագահում է Մասնագիտական և տեխնիկական կրթության հարցերով ներկուսակցական հանձնախմբում, որը ձգտում է ապահովել ուսումնակրթական այնպիսի ծրագրեր, որոնք բոլոր տարիքի մարդկանց համար հնարավորություն կապահովեն ունենալ այնպիսի հմտություններ ու կարողություններ, որոնք անհրաժեշտ են 21-րդ դարի աշխատատեղերը համալրելու համար: Այս ուսումնակրթական ծրագրերի կատարելագործմանն ուղղված նրա բազմաթիվ առաջարկներ տեղ են գտել 2015թ. վերանայված Տարրական ու միջնակարգ կրթության մասին ակտում: Թիմը նաև աջակցում է տնտեսական գործունեության խթանմանը՝ ենթակառուցվածքային ներդրումների, ներգաղթային բարեփոխումների ու առողջապահական ծառայությունների հասանելիության մեծացման նորարարական ռազմավարությունների միջոցով:

114-րդ գումարման կոնգրեսում Թիմը ներկայացրել է Վիրջինիա նահանգի համար կարևորություն ներկայացնող շատ կարևոր օրենքներ, այդ թվում՝ Վիրջինիայի 9-ը հնդկացիական ցեղերի ճանաչման վերաբերյալ: Սեռական բռնություններ վերապրածների հետ Վիրջինիայի համալսարանում ունեցած քննարկումից ոգեշնչված Թիմը մշակեց հաջող մի օրենք, որով խրախուսվում է միջնակարգ հանրակրթական դպրոցներում սեռական ու գույրնկերոջ բռնության կանխարգելման մասին հարցերի արծարծումը: Իսկ Վիրջինիայում սահմանափակ ափիոնային համաճարակի մասին բուժում անցնող թմրամոլների, նրանց ընտանիքների, բուժաշխատողների ու իրավապահների հետ քննարկումների արդյունքում Թիմն առաջ քաշեց մի օրենք, որով առավել հասանելի էին դառնում գերդոզավորման դեմ կիրառվող դեղամիջոցները՝ կանխելու թմրամիջոցների օգտագործման արդյունքում գրանցվող մահվան դեպքերը:

113-րդ գումարման կոնգրեսում Թիմը քաղաքացիական պատերազմի մարտադաշտերը պահպանելու մասին օրինագիծ առաջ քաշեց, որը ընդունվեց ու նախագահ Օբամայի ստորագրությամբ գործողության մեջ մտավ: Նրա ջանքերի արդյունքում ներկուսակցական նախաձեռնություն եղավ Առողջապահության ազգային ինստիտուտներում մանկական քաղցկեղի հետ կապված հետազոտությունների ընդլայնման վերաբերյալ, ինչի առիթը Գաբրիելա Միլերի, լիսբոնրոգի աղջնակի մահն էր ուղեղի քաղցկեղից 2013թ. հոկտեմբերին:

Թիմի ուշադրության կենտրոնում են եղել կլիմայի փոփոխության հարցերը ու դրանից բխող հետևանքները Վիրջինիայում, մասնավորապես՝ ծովի մակարդակի բարձրացումը և հեղեղումները: 2014թ. նա համաժողով էր կազմակերպել երկու կուսակցությունների մասնակցությամբ, որտեղ քաղաքականություն մշակողների, փորձագետների և տարածքային

շահառուների հետ քննության առնվեց Հեմփթոն Ռոուդս նավահանգստային հատվածում այս մարտահրավերներից բխող ռիսկերի դեմ պայքարելու ռազմավարությունը:

Թիմը հասակ է առել Կանգաս քաղաքում, որտեղ նրա հայրը մետաղամշակման արհեստանոց ուներ: Մովորել է Միսսուրիի համալսարանում, ապա Հարվարդի իրավագիտության դպրոցում, իսկ հանրային ծառայության կարիերան Թիմը սկսեց այն ժամանակ, երբ ուսումը Հարվարդում 1 տարով տարկետելով մեկնեց Հոնոլուլու, ճիզվիտ միսիոներների հիմնած տեխնիկական դպրոցի գործունեությունը կազմակերպելու համար: Համալսարանն ավարտելուց հետո նա Ռիչմոնդում 17 տարի փաստաբանական գործունեություն է իրականացնել՝ ներկայացնելով հիմնականում այն անձանց շահերը, որոնց մերժվել է բնակարանի ապահովումը պայմանավորված ռասայական պատկանելությամբ կամ հաշմանդամություն ունենալու հանգամանքով: 1987թ. նա նաև սկսեց դասավանդել Ռիչմոնդի համալսարանում՝ ոչ լրիվ դրույքով:

Առաջին անգամ ընտրվել է Ռիչմոնդի ավագանու անդամ 1994թ., ապա ընտրվել է քաղաքապետի պաշտոնում: 2002թ. նա դարձավ Վիրջինիայի փոխնահանգապետը, իսկ 2006թ. դարձավ Վիրջինիայի 70-րդ նահանգապետը:

Թիմն ամուսնացած է Էնն Հոլթոնի հետ, ով Վիրջինիա նահանգի կրթության վարչության պետն է: Նախկինում զբաղվել է իրավական աջակցության հարցերով, եղել է անչափահասների հարցերով դատավոր, ինչպես նաև վարել է «Մեծ ակնկալիքներ» ծրագիրը, որի շրջանակում Վիրջինիայի խնամատար ընտանիքների ավելի քան 500 երեխաներ հաճախել են համայնքային քոլեջներ: Թիմն ու Էննը հպարտանում են իրենց երեք չափահաս երեխաներով և ապրում են Նորթսայդ Ռիչմոնդ թաղամասում, որտեղ նրանք հաստատվել են ավելի քան 30 տարի առաջ՝ իրենց ամուսնությունից անմիջապես հետո: Թիմը սիրում է կարդալ, ժամանակ անցկացնել բնության գրկում և շրթահարմոն նվագել Վիրջինիայի բլուզրաս բենդերի հետ: